

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան 10 րոպե, կես տարվանը 6 րոպե
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԳՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովուրդը և բժիշկները. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Հին-Նախընտրանից. Ներքին Լու-
րեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիս-
ից. Արտաքին Լուրեր. — ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անդրկական նամակներ.

ԺՈՂՈՎՈՐԴԸ ԵՒ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Տխուր մտածութիւններն առիթ է տա-
լիս այն թերահաւատութիւնը և ստանու-
թիւնը, որով մեր ժողովուրդը վերաբեր-
վում է դէպի բժիշկները, դէպի բժշկական
գիտութեան այդ արտոգոստը ներկայա-
ցուցիչները: Բազմաթիւ հիւանդութիւն-
ները, կեանքի հակառակդական պայման-
ների հետ միացած՝ ամեն օր բազմաթիւ
հազարաւոր զոհեր են տանում ժողովրդի
մահաւանդ աղքատ դասակարգից. մի կող-
մից ամեն օր հարիւրաւոր մարդիկ զոհ
են գնում այս և այն հիւանդութեան մի-
միայն այն պատճառով, որ բժշկական
լուրջ օգնութիւն չէ հասցնում: — Իսկ
միւս կողմից էլ եղած բժիշկները զանազա-
վում են, որ պրակտիկ և չունեն, քա-
կայն չը նայած երկու կողմի այդ դուռ-
ընտանիք, այնու ամենայն բժշկութիւնը և
բժիշկները շատ դժուարութեամբ են թա-
փանցում ժողովրդի մէջ, և նոյն այդ ժո-
ղովուրդը շարունակում է խոյս տալ նոր
գիտութեան վրա հիմնված բժշկութիւնից,
բաւականանալով Տ. Բ. Ի. մ. եր. օ. և
հայրերի ու պապերի գործ դրած միջոց-
ներով և զեղերով: Այդ ինքն ըստ ին-
քեան տխուր. — Եւ ժողովրդի, և թէ բը-
ժշկական գիտութեան տարածման համար
փառապաշտ երկու ունի իր մի քանի
պատճառներ: Այդ պատճառներից մէկը
այն է, որ մեր ժողովուրդը, ինչպէս և ա-
մեն մի ազգութեան մէջ խորատուղված
ժողովուրդ, զանազան նախապաշարմունք-

ներն գերի դարձած լինելով և ամուր կը-
պած լինելով նախահայրերից թողած ա-
ւանդութիւններին, դժուարութեամբ է ըն-
դունում այն բոլոր նորութիւնները, որ
բերում է իր հետ այժմեան բժշկական
գիտութիւնը, և թերահաւատութեամբ
բժիշկների գործ դրած բժշկական միջոց-
ները: Մի կողմից հասարակութեան
պատճառով գիտութիւնից խորշը իսկ
միւս կողմից դէպի այժմեան բժշկութիւնը
ունեցած թերահաւատութիւնը, որ
առջ են բերել այն սառն յարաբերութիւ-
նը, որի վրա անհրաժեշտ է որով ժողո-
վուրդը վերաբերվում է դէպի այժմեան բը-
ժիշկները:

Բայց այդ տխուր երևոյթի միակ պատ-
ճառը դա չէ, ժողովրդի շրջանում այդ
անտեղի և փաստաւոր թերահաւա-
տութեան առաջ գալու մէջ մեզ ա-
ռու են մասամբ և հէնց իրանք էսկու-
լապները-բժիշկները: Կրօնն ապացոյց
կարող է լինել այն կարծիքը, և այն հա-
յեցակէտը, որ կայ ընդհանրապէս հասա-
րակութեան մէջ՝ բժիշկների մասին: Նրա
մէկի տանը՝ հիւանդը ծննդած մէջն է,
նրա մէկի օրիւնի գաւազը, մայրը կամ կի-
նը կուռն են մահուան հետ, — հարկէ,
այդպիսի դէպքերում հիւանդացիները վա-
ղում է հէնց առաջին պատահած բժշկի
և մօտ, և նրանից օգնութիւն է աղբւսում:
Գալիս է մի բժիշկ, գալիս է միւսը, եր-
բորդը: Եւ ահա հիւանդի անկողնի մօտ
տեղի են ունենում այնպիսի երևոյթներ,
և այնպիսի տեսարաններ, որոնք ոչ թէ
միայն յուսահատեցնում և թերահաւա-
տ են դարձնում հիւանդին շրջապատողնե-
րին, այլ և կատարեալ զրուակ են յարու-
ցանում դէպի բժիշկները ընդհանրապէս:
Նոյն իսկ այն օրակէն, երբ հիւանդը ծա-
նը դրութիւնը պահանջում է լուրջ օգ-
նութիւն, հէնց այդ օրակէն բժիշկներից
մէկը սկսում է հիւանդութեան ծանրանա-
լու մէջ մեղադրել միւսին, ասելով որ նա

չէ հասկացել թէ ինչ է հիւանդութիւնը:
Կանչում են երրորդ բժիշկին, և յաճախ է
պատահում որ նա էլ մեղադրում է ա-
ռաջին երկուսին՝ անհարկելով, որ նրանք
ընդհանրապէս չեն կարող բժշկել ծանր
հիւանդութիւնները և իրանց անտեղեկա-
կութեամբ սաստկացրել են հիւանդու-
թիւնը: Կրօնից յետոյ արդէն նոյն իսկ
մահուան ծանկերի մէջ գտնվող հիւանդի
անկողնու մօտ տեղի են ունենում անկե-
րէն բժշկական բամբասանքներ, անուա-
ղաբոյժութիւններ, թշնամական ցոյցեր, ու-
րոյն այն տեղի են հասցնում, որ հիւան-
դաւորը ստիպւած է լինում բժիշկներին
առանձին առանձին բերել տալ իր
տունը, որպէս զի նրանք միմեանց չը պա-
տահեն և զանազան անախորժ տեսարան-
ների տալիք չը տան:...

Այդ դուռ բաւական չէ, մի և նոյն հի-
ւանդի համար հրաւիրված բժիշկները
հիւանդութեան մասին այնպիսի տարբեր
կարծիքներ են յայտնում, որ հիւանդին
շրջապատողները չեն իմանում ժպտան
թէ ողբան: Մի և նոյն հիւանդութեան
մասին մի բժիշկ ասում է, թէ՝ թոքերի
բորբոքում է, միւսը պնդում է, որ դա
տիֆ է, երրորդը աշխատում է ապացու-
ցանք, որ դա ժուռնալական անբուժելի
հիւանդութիւն է, և զոր հետեւները այն
է լինում, որ մի բժիշկ դէն է շարունակ
միւսի դրած դեղը, իսկ միւսի նշանակած
դեղի վրա երրորդը ծիծաղում է:...

Այդ անհամարելի և անպայման դա-
տապարտելի վարմունքը, մանաւանդ երբ
բժիշկներին յանձնված հիւանդները մեռ-
նում են, առաջ է բերում հասարակու-
թեան մէջ նախ մի թերահաւատութեան
թիւն դէպի բժշկութիւնը ընդհան-
րապէս, և ապա տեղեկութիւն ու արհա-
մարհանք դէպի այդ տեսակ էսկուլապ-
ները, դէպի բժշկական գիտութեան ան-
արժան ներկայացուցիչները:
Բժշկական գիտութեան անարժան ներ-
կայացուցիչներ ենք անուանում այդ տե-

սակ բժիշկներին ոչ թէ միայն այն պատճա-
ռով, որ դրանք իրանց աջողութեան հա-
մար ոտի տակ են տալիս բժշկական հա-
սարակ էտիկայի բոլոր պահանջները, մը-
ցում են այնպիսի միջոցներով, որոնք մի-
այն զուցէ դուրս չեն երի շրջանում
են սահակաւ, այլ և զխաւորապէս այն
պատճառով, որ այդպիսիները իրանց գոր-
ծունեութեամբ և բժշկութեամբ ապացու-
ցանում են, որ շատ բոլորի են այն գի-
տութեան և այն արհեստի մէջ, որին ի-
րանք ծառայում են: Հէնց այդպիսի կար-
ծիք է կազմել, տարբազգաբար, հասա-
րակութիւնը բժիշկների մեծ մասի վերա-
բերմամբ: Բժիշկների այդ աչքի ընկնող պա-
կասութեան վրա վերջին ժամանակներս
ուշադրութիւն են դարձրել նոյն իսկ զա-
նազան բժշկական ընկերութիւններ:

Անկասկած այդ երևոյթը կարելի է բա-
ցատրել, զէթ մասամբ, նրանով, որ բժիշկ-
նրի մեծ մասը համալսարանից դուրս դա-
լով և կեանքի մէջ մանկելով բաւականա-
նում են իրանց ունեցած տեղեկութիւննե-
րով և չեն հետևում բժշկական գիտու-
թեանը: Ամեն օր և ամեն քայլափոխում
կարելի է պատահել բազմաթիւ այնպիսի
բժիշկների, որոնք ոչ թէ միայն չեն հի-
տեւում բժշկութեանը, ոչ թէ միայն չեն
իմանում թէ ի՞նչ նորութիւններ կան բը-
ժշկական գիտականութեան մէջ, և ինչ նոր
յեղափոխութիւններ են եղել բժշկութեան
հետ կապ ունեցող գիտութիւնների մէջ, —
այլ նոյն իսկ աւելորդ են համարում այդ
բոլորը: Մոլորական է դարձել այն երևոյթը,
որ բժիշկը թողնում է իր արհեստը և փո-
խանակ բացառապէս նրան նուիրվելու,
պարագում է կամ ուսուցչութեամբ, և
կամ կապալաւոր, բանկիր, զանազան հիմ-
նարկութիւնների կառավարիչ է դառնում,
և այդպիսով ոչ միջոց է ունենում և ոչ էլ
պահանջ հետեւելու բժշկութեանը և գի-
տութեանը: Եւ այդպիսի մարդիկ շարու-
նակում են բժշկութեամբ էլ պարագայի
խաղաղով մարդկանց կեանքի հետ:...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Valeat quantum valere potest

III

Ձը կայ ուրիշ մի երկիր, ուր արհեստը այնչափ
ծաղկած դրութեան մէջ լինի կամ այնչափ ընդ-
հանրացած, որչափ Անգլիայում: Միեւնեղիտա-
կան աշխարհը պարտական է անգլիական աշ-
խատանքի, ստանդարտի և գործնական ազգին,
որի քաջամտութեամբ և հնարագիտութեամբ հա-
զարաւոր նոր ճիւղեր, արհեստներ և զբաղմունք-
ներ են բացված լուսաւոր աշխարհի բարեկեցու-
թեան, անդորրութեան և առաջադիմութեան հա-
մար: Անգլիայում մանուֆակտուրայի ապրանքնե-
րի գործարանները հասած են ծայրագոյն կա-
տարելագործութեան. մինչդեռ ֆիզիկական, օդ-
երեքական, քիմիական, մեքենագիտական, էլեք-
տրական, նաւային և գործնական արտա-
մրցում են աշխարհի բոլոր գործարանների հետ:
Ձը նայելով որ Անգլիան մի փոքրիկ կղզի է, որի
հասցն անգամ դրոշմն է գալիս, այսօր անգլիա-
կան վաճառականութիւնը միացրած է Աւստրա-
լիան, Աֆրիկան, Ամերիկան, Եւրոպան և Ասիան
այդ փոքրիկ կղզու հետ: Անգլիացի արհեստաւոր
կրթվում է պատերազմելու աշխարհի դէմ ճիշդ
այնպէս, ինչպէս Գերմանիայում կրթվում է դիմ-
աւոր պատերազմելու թշնամու դէմ: Անգլիացի
գործաւորներն այնչափ է օգնում իր երկրի ա-
ռաջադիմութեան, որչափ փափկասէր ֆրանսի-
սներն օգնում է իր երկրի թաւր ուսերի սպառ-
մանը:

Գործաւորների և գործաւորներին դրութիւ-
նը բարեբեւութեամբ համար Անգլիայում կան բազմա-
թիւ ընկերութիւններ, որոնցից մէկն որոշ միջոց-
ներով ապահովում է գործաւոր դասի անմիջա-
պէս գործ գտնելը. մի ուրիշ ընկերութիւն ձեռ-
նարկում է շաքարական մի ամանութիւն գումա-
րով պաշտպանել գործաւորի ընտանիքն մի ան-
սպասելի ձախողութեան կամ երկարատեւ հիւան-
դութեան ժամանակ: Մի երրորդ ընկերութիւն
կառուցանում է հանգիստ, մաքուր և առողջա-
պահական կանոններ համապատասխանող փոք-
րիկ տներ գործաւորներին համար և միջոց է տա-
լիս այդ դասին կարճ ժամանակամիջոցում
ձեռք բերել իր վարձած տունը: Մի այլ ընկե-
րութիւն ունի խնայողական դրամարկը, ուր
ընդունվում են գործաւորի յետ գցած պէնա-
ները և հայրական հոգատարութեամբ խնա-
մում են գործաւոր դասի գաւազներին ապագա-
յում:

Բայց գործարաններից Անգլիայում կան չորս-
հաւոր կոչվող աշխատանքներ, ուր գործարա-
նից ստացած ապրանքը մեքենայով կապվում է
մաքրվում է, դասաւորվում է, և այլն: Ուէրհաու-
զում ընդունվում են երկու սեռի գործաւորներ,
որոնք մեքենայի պէս աշխատում են ամբողջ օրը
և ստանում շաքարական ուսման: Ամեն մի գրա-
սենեակ ունի իր վճարման օրը, երբ բաժան-
վում է գործաւորներին հասնելի դրամը: Ըստ
մեծի մասին այդ օրերն են ուրբաթ և շաբաթ:
Քննելու անգլիացի գործաւորներու կեանքը՝
տեսնելու համար արդեօք օւնի գործաւորու-
նին երջանկութիւն իր միջոցով ասպարիզում
թէ հէնց յուսահատութիւնն երկաթէ օղակի պէս
սեղմում է նրա հոգին և ճնշում նրա բարոյական
ու ֆիզիկական ոյժերը: Իրաւի, դուրսի, առողջ

և աշխատասէր աղջիկների խմբեր տեսնվում են
փողոցներում առաւօտեան շատ կանուխ. սրան-
ցից իւրաքանչիւրի ձեռքում գտնվում է յարդից
հիւսուած մի թիւիկ դամբիւղ, որի մէջ զըն-
ված է գործաւորուհու օրվայ պաշարը: Նայելու
դամբիւղի մէջ. այդտեղ սովորաբար կարելի է
տեսնել կարագ լցվող քոված հացի քանի մի լա-
րակ կտորներ, մի փոքրիկ թիթեղեայ տուփ, որի
մի մասում զոված է մօտ երկու գալ թէյ, կամ
քոքաօ, իսկ միւս մասում քաւորդ ֆունտ շաքարի
աւաղ, թիթեղեայ մի պանած քաժակ, մետա-
ղաթիկը շինված մի կիսակօր բառնալիք, թի-
թեղեայ մի փոքրիկ թէփփ, մի զոյգ դանակ ու
չանգալ, մի մաքուր սալֆետ և մի օր և է
սկսված ձեռագործ, օրինակ՝ գուլպայ կամ շա-
պիկ կամ մի ուրիշ բան: Ժամը մէկին ընդհա-
տում է Ուէրհաուզի և գործարանի աշխատութիւնը:
Այդ ժամանակ թիթեղեայ բաժակները զրկվում
են ներքի յարկում գտնվող կաթնապատմանը, ուր
միշտ պատրաստ պահվում է տաք և մաքուր
շուր. կամ այդ ջրից լցվում են թիթեղները կամ
էլ կրակի մօտ զրկելով՝ դրանց մէջ տաքացնվում
է ջուր թէյի համար: Աղջիկներից մի քանին էլ
Ուէրհաուզի պատերից ցցված բազմաշապ խողո-
վակներից բաց թողնելով գաղ, վառում են և գա-
ղերի վրա կախնելով իրանց թէփփները, տապա-
կում են միւս կամ ապուխտ: Նրբեմն միւս առնե-
լու փոխարէն աղջիկները դնում են «փայ» կոչ-
վող փոքրիկ և էփան խմորեղէններ, որոնց մէջ
զրկված է քիչ քանակութեամբ միւս. այսպէս թէ
այնպէս՝ գործաւորուհու ճաշն առնել կաղորելի
է քան թէ ճոխ: Ժամը երկուսին կրկին սկսվում
աշխատութիւնն և ընդհատվում է երկուշաբթի, երբ
լուսալիլուց և մաքրվուց յետոյ, աղջիկները
առնում են իրանց զամբիւղները և վերադառ-

նում տուն: Առաւօտեան կանուխ կամ էլ ճա-
շից յետոյ, գործաւորուհին գտնում է ժամա-
նակ նաև իր ձեռագործի համար քանի մի շաքը
բանուածք աւելացնելու: Երեկոյան տուն վե-
րադառնալուց, գործաւորուհին կրկին լուսալիլում
է և իջնելով նախասենեակը, սկսում է դաշնակի
կամ մի ուրիշ գործիքի վրա երազնալկան վար-
ժութիւն. կամ էլ վաղում է դէպի իրանց հարե-
ւան եկեղեցին ներկայ գտնվելու հոգևոր երգեցո-
ղութեան գանձին, որպէս զի պատրաստ լինի
կիրակի օրվայ ժամատաղութեան համար, երբ իր
խմբի հետ պէտք է երգէ օրվայ սաղմոսները և
սուրբ հիմներ: Ընթիւնից յետոյ էլ աչքից անցնե-
լով օրաթիւրները կամ իրանց դասի շաքարա-
թիւրը, գործաւորուհին մտնում է անկողին,
միւս օրը կանուխ արթնանալու համար Այս
գործողութիւնները շարունակվում են մինչև շա-
բաթ կէսօր, երբ շաքարական ուսման
լով, աղջիկը վերադառնում է տուն: Եթէ անգլի-
ական քաղաքների կէս տխուր և կէս լուրջ կե-
րպարները փոխվում է երեք, այդ էլ պատահում
է շաքար օրերը միջոցից յետոյ, երբ քաղաքի
զլխաւոր փողոցները, շուկաները, վաճառատները
լցվում են պարզ, բայց մաքուր հագնված գործա-
ւորուհիներով, որոնք ուրախ դմբելում և դիւրա-
ժպիտ շրթունքներով խոսում են, գնում են և
այլն: Շաքար օրերի ընդհանուր ուրախութիւնից
զուրկ չեն և գործաւորները, որոնցից իւրաքան-
չիւրն իր կնոջ կամ երեխաների հետ պտտում է
վաճառանոցները և իր արդար փափակով ձեռք
բերած դրամով դնում խաղալիքներ, հագուստ և
երեսաների համար և մի շաքարվայ պաշար իւր
տան համար, օրինակ՝ թէյ, շաքար, հաւկիթ,
կարագ, սուրճ, ապուխտ և այլն:
Շաքար օրերը՝ միջօրի յետոյ միշտ բաց են

բազմապատկերված զոհ է Զրանց-Յովսէֆ և Վիլհելմ կայսերների բարեկամական տեսակցութիւնը:

—Եւրոպական մի քանի լրագրիչներ խօսելով Բուլանժէի և նրա համախոհների վերաբերմամբ կայացած վճռի առիթով, ասում են, որ Բուլանժէ և նրա համախոհները իր աւաքան ապէս այլ ևս գոյութիւն չունեն Զրանցիայի համար և արդէն մեռել են:

—Չեխական լրագրիչներից շատերը թշնամաբար խօսելով աւստրո-գերմանական դաշնակցութեան մասին, ասում են, որ եթէ այդ դաշնակցութիւնը հաստատ մնայ, այն ժամանակ պէտք է ենթադրել, որ Աւստրիան Գերմանիայի մի մասը կը դառնայ:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Մեզ գրում են, որ խզիլի մօտ գտնուող մի գիւղում, մէկ թուրք զինուորիկ է միայնակ իւր լինելով: Նրա համար, որ կասկածել է թէ նա է իր երկրու խուրձ խոտ գողացողը... Ինչ ասել կուզի, որ հիմապի վարք ու բարք է տիրում թուրք գիւղում...

Հիւսիսային Զորացի զբաղվող կոնգրեսը, որ զուգարկած էր Պարիզում, ի միջի այլոց հետեւեալ ուշադրութեան արժանի վիճակը կայացրեց. «Հիւսիսային և մարջիտիլի հրապարակական սեանքները պէտք է արգելին, յանուն հասարակական առողջապահութեան»:

Այս օրերս Պարիզում ի ցոյց են դրվել 20 տարեկան նկարչուհի Լամա Բապէնի նկարները: Ներկայումս ծնվել է առանց ձեռքերի, և նկարում է ոտներով: 16 տարեկան հասակից նա իրան նուրբ նկարչութեան, և այժմ շատ արդի հետեւողների է հասել:

Վճռված է Պարիզում կանգնեցնել Դանդոնի արձանը:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԳ, 9 օգոստոսի Հրատարակված է, որ համալսարաններից աւարտողները, համաձայն 1884 թվ. կանոնադրութեան, վերնորական ծառայութիւն մտնելու համար ստանում են երկու տարվայ յետաձգում, մինչև որ քննութիւն կը բանեն քննող յանձնաժողովներում, ամենաշատը մինչև 27 տարեկան հասակը: այդ հասակից աւելի եղած զէպքում պէտք է խնդրամատոյց լինել սովորական կարգով:

ՊԱՐԻԶ, 9 օգոստոսի Բուլանժէի ապիստացիային մասնակցող վերնորականների վերաբերմամբ խիստ միջոցներ են ձեռք տանված: 22 օֆիցերներ խոստովանել են պաշտօնից: 21 օւստեր-օֆիցերներ զրկված են աստիճանից, տեղափոխված են ուրիշ տեղեր և կամ ենթարկված են բանտարկութեան: ութ ժամգործ պաշտօնագործի են եղած: մի քաղաքացիական պաշտօնեայ ևս արձակված է ծառայութիւնից:

ՊԵՏԵՐՈՒԳ, 10 օգոստոսի Հրատարակված են ժամանակաւոր կանոններ, որոնք վերաբերում են այն միջոցներին, որոնցով կարելի է վերացնել երկաթուղիների մրցումը, բնութիւն տեղափոխելու վերաբերմամբ «Новое Время» լրագիրը լսել է, որ ներքին գործերի մինիստրի օգնական զինեթալ իոնատիով նշանակվում է Կիէվի գեներալ նահանգապետ:

ԱՌԷՆԲ, 10 օգոստոսի Թուրքերը շատացնում են յունաց սահմանի վրա պաշնակները և Մակեդոնիայում եղած բերդապահ զորքերի թիւը: Նիժնի-Նովոգորո՞՞ 10 օգոստոսի Թէյի առևտուրը ընդհանրապէս աւելի թոյլ է, շատ հին թէյ է մնացել առանց ծախելու:

ՊԵՏԵՐՈՒԳ, 11 օգոստոսի Երէկ Կրասնոէ Սկոտում տեղի ունեցաւ Բարձրագոյն զօրաւանդէս, որից յետոյ Թագաւոր Կայսրին ներկայացան զինուորական զպրոցները: Կայսրը անցաւ խնկէրների շարքերի մօտով, բարեհաճեց մի քանիսին հարցեր տալ, և յետոյ շնորհաւորեց նրանց օֆիցերի աստիճան ստանալը: Ընդամենը այս տարի աւարտում են 1,022 օֆիցեր: Հէնց երէկ Կրասնոէ Սկոթի բանակի զինուորները սկսեցին գնալ դէպի Իրանց տեղերը:

ՊԵՏԵՐՈՒԳ, 11 օգոստոսի Այսօր տեղի ունեցաւ Ա. Ա. Կրասնիսկու թաղումը: Մարմինը արտակարգ դնացքով բերվեցաւ Պալատիկուց, և կայսրանից մինչև Նովոգորո՞՞ վանքը հանդուցեալի մարմինը ձեռքերի վրա տարան մամուլի ներկայացուցիչները և քաղաքային վարչութեան անդամները: Դադաղի վրա մինչև 25 պառկ զբր-վեցաւ մամուլի, զանազան հիմնարկութիւնների և հասարակութիւնների կողմից, և ի միջի այլոց մի պառկ «Голосъ»-ի աշխատակիցներից: Թաղմանը ներկայ էին մամուլի և քաղաքային վարչութեան ներկայացուցիչները, ուրախութեամբ զպրոցների աշակերտները: Գերբերդի վրա ճառեր խօսեցին՝ Գրադովսկի, «Детское Утешение»-ի խմբագիր Սիմեոնով, քաղաքային վարժուհի Մատվիլինա և հրէական լրագրի խմբագիր Յերեր-բաուս:

ՎԻԵՆՆԱ, 11 օգոստոսի Այստեղի կիսապաշտօնական լրագրիչները հերքում են Պարիզից տարածված այն լուրերը, որ իբր թէ իշխան Բիւմարկ մտադիր է առաջարկել մի կոնգրես գումարելու՝ զինաթափ լինելու հարցը քննելու համար: Միւսին Օրենսդիր չէ հրաւիրված այն հանդիսաւոր ճաշին, որը պէտք է վաղը տրվի Սերբիայի նախկին թագաւորը իր քո սպասկով այդ հրաւերին, արդէն հրամայած է եղել հիւրանոցում պատրաստելու իր գեներալական համազգեստը:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 11-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէն	95 ր. 40
Բեռլինի վրա 100 մարկ	46 > 70
Փարիզի վրա 100 ֆրանկ	37 > 85
Ոսկի արծէն	7 > 62
Մաքսային կուպոններ	152 > 50
Արծաթ	1 > 10
Բարձրագույն վիսկոններ	6 և 70
Պատակ. բանկ. 5% 1-ին շրջանի	98 > 62
— — — — — 2-րդ	98 > 75
— — — — — 3-րդ	98 > 50
— — — — — 4-րդ	98 > 50
— — — — — 5-րդ	98 > 87
— — — — — 6-րդ	99 > —
Ներքին 5% անապիս փոխառված	83 > 25
Արեւելյան 5% փոխառված 1-ին շրջ.	98 > 87
— — — — — 2-րդ	98 > 87
— — — — — 3-րդ	99 > —
Ներքին 5% անապիս փոխառված երկրորդ	265 > 25
5 1/2% Բէնտա	247 > —
Ոսկեայ բէնտա	102 > 50
Նովոբորո՞՞ կոնսոլիդ. փոխառ.	172 > —
Նոր երկաթուղային բէնտա	141 > 50
5% գրաւակա. թղթեր կալուած.	98 > 87
փոխ. կրեդ. ընկ. մետ.	146 > —
— — — — — թղթաւոր.	92 > 50
Գրաւ. թղ. Ալեւ. բանկի	98 > 25
Գրաւական բանկի	102 > 50
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43 տ.	79 > 05
— — — — — Բուլճարի—18 և 43 տ.	79 > 75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ-գաջիաներ	94 > 87
Մոսկույի քաղաք. օրվ-գաջիաներ	94 > —
Օգէնայի	93 > 87
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ.	83 > 50
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հանդարտ է:	

Ժամանակաւոր խմբագիր Թ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՅ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԲՈՒՆԻ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով յայտարարում է, որ քննութիւնների և վերաքննութիւնների ժամանակը նշանակված է օգոստոսի 20-ից 31-ն: Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 1-ից: Նոր մշտնոգ աշակերկների խնդիրները ծնողեան և ծաղիի վկայականների հետ 'ի միասին ընդունվելու են օգոստոսի 15-ից:

1—3

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՏԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Աշակերտների ընդունելութիւնն ու քննութիւնը կը սկսվի օգոստոսի 20-ին, իսկ ուսումը՝ սեպտեմբերի 1-ին:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԱՇԿԵԻՑՆԵՐ ԲՈՂՈՐ ՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Տպած կանոնադրութիւնը կարելի է ստանալ ճրիարար: Հասցէն. Тифлисъ. Соловьян. Садовая ул. № 38. 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ

ՅՈՐԴՆԵՑ Ս. ՇԱՀԱԶԻՅԱՆՑ

ԳԻՆԷ Է 25 ԿՈՊ.

ՀԱՅՈՒՆԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի զիտութիւն հայ հասարակութեան, որ Ս. Նշան եկեղեցական ծխական օրիորդաց միջոցաւ զարդում աշակերտութիւնների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 25-ից, ամենայն օր և կը տևի մինչև օգոստոսի 31-ը:

1—5

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍՍԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխապարձ Ուրբաթ, 18/30 օգոստոսի ԲԱՌՈՒՄԻՑ գուրս կը գնայ շոգնուաւ L'EBRE (ԷԲՐ) նաւապետ RANGONE (ՌԱՆԴՈՆ), մտնելով Կ. Պօլիս, Պորտ-Լաճօս և Լափալար: Արդենները՝ ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԵՍՍԷՆԺԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԷՐԳ ՀԵՃՈՒԲԵԱՆ, ՀԵՃՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՈՂՂՈՒՍԻ:

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխապարձ Հինգշաբթի, օգոստոսի 17-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգնուաւ, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) գուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Կաթսոն, Կ. Պօլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործադիրներին: Բաթումում Լէմբուրգի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում՝ Նախկին Արժուտի դպրեկետում, № 114.

(5 և 12) 2—2

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԱԶԱ ԳԱՂԱԳԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՈՒՄ ԲԱՑՎԱԾ Է ԳՐԱԴԱՐԱՆ:

Գրադարանը չունենալով սեփական միջոցներ, զիմում է յարգելի հեղինակներին, թարգմանիչներին և ուրիշ անձանց, խնդրելով օգնել զրադարանին՝ թէ զրբեր նուիրելով, և թէ զրամական նուէրներ անելով: Զանկացողները թէ զրբերը և թէ զրամական նուէրները կարող են յանձնել Թիֆլիսում Կենտրոնական գրալաճառանոցին, ուր և այդ բոլորը կը մտցնվին Թաւրիկի հայոց առաջնորդից տուած ժապաւինեալ մատենի մէջ:

3—10

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ս Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական: Ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ: Աւանդելի տուարկայք սորա են՝ 1) Առևտրական Տեսեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիի վրա, 5) Առևտրական Թղթաւցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղադրութիւն: Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոցան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլոյակում: Աղէքսանդր ֆրիդմանովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազորնայա փողոցների անկիւնում: զեղատան զիմադ: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Ծովանօնների բանկային զրատեսեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք զիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэляну.

10—20 (Ե. Շ.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՏԻԿԻՆ ԿՈՒԷՍԻ

(Վեկամիւնօվսկայա փողոց, № 34)

Կը բացվի օգոստոսի վերջին: Պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների բարձր դասարանների համար: Յրաններէն և զերմաներէն դասեր և զործնական վարժութիւն:

4—10